ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

‹‹ՀՀ ԿԳՄՍՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ›› ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՆԳԼԵՐԵՆ

ԹԵՄԱ՝ Դասը որպես ուսուցման կազմակերպման հիմնական ձև,դասի արդյունավետության բարձրացման հոգեբանամանկավարժական ուղիները և պայմանները,խաղը որպես ուսուցման մեթոդ

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Նարինե Ավագյան

ԴՊՐՈՑ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի թիվ 4 հիմնական դպրոց

Վարդենիս- **2022**

Բովանդակություն

1.Ներածություն.....**3**

2.Գրական ակնարկ.....**5**

3.Փորձարարական հետազոտություն.....**6**

3.1.Խմբի նկարագիրը.....6

3.2.Փորձարարական դասեր.....7

3.2.1.Փորձարարական դաս-1.....8

3.3.2.Փորձարարական դաս-2.....9

4.Վերլուծություն.....10

5.Գրականության ցանկ.....12

6.Հավելված.....13

1.Դասապլան1.....10

2.Դասապլան2.....13

Ներածություն

Դիդակտիկայում ուսումնառության գործընթացի կազմակերպման ձևերը բացահայտվում են այն միջոցներով, որոնց շնորհիվ ուսուցիչը շփվում է աշակերտների հետ կրթական խնդիրների լուծման գործում: Դրանք լուծվում են գործունեության կառավարման, հաղորդակցական հարաբերությունների տարբեր եղանակներով: Վերջինիս շրջանակներում իրականացվում են կրթության, կրթական տեխնոլոգիաների, ոճերի, մեթոդների և դասավանդման գործիքների բովանդակությունը: Ուսուցման գործընթացի

կազմակերպման առաջատար ձևերն են դասը կամ դասախոսությունը (համապատասխանաբար՝ դպրոցում և համալսարանում): Վերապատրաստման կազմակերպման նույն ձևը կարող է փոխել կառուցվածքը և փոփոխումը՝ կախված ուսումնական աշխատանքի առաջադրանքներից և մեթոդներից: Օրինակ՝ դաս-խաղ, դաս-գիտաժողով, երկխոսություն, սեմինար: Դպրոցում դասընթացների հետ մեկտեղ գործում են կազմակերպչական այլ ձևեր (ըստ ցանկության, ուսումնական խմբի, լաբորատորիայի սեմինար, անկախ տնային առաջադրանքներ): Վերահսկողության որոշակի ձևեր կան՝ բանավոր և գրավոր քննություններ, վերահսկողություն կամ ինքնուրույն աշխատանք, թեստային առաջադրանքներ: Դասի առանձնահատկությունները որոշվում են ուսուցման համակարգում նրա նպատակներով և ձևերով: Յուրաքանչյուր դաս յուրահատուկ տեղ ունի առարկայի համակարգում:

Ուսուցման կազմակերպման դաս-դասարանային համակարգի կենտրոնական, որոշիչ տարրը դասն է: Հանրակրթական դպրոցներում որտեղ դաս-դասարանային համակարգը կիրառվում է առավել լրիվությամբ, աշակերտները գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհամեմատ մեծ մասը ձեռք են բերում դասի ժամանակ:Դասն է հիմնականում իրականացնում սովորողների մտավոր զարգացման, դաստիարակության և ձևավորման ֆունկցիաները: Հանրակրթական դպրոցի սովորողը մինչև դպրոցն ավարտելը անցնում է ավելի քան տասը հազար դասերի միջոցով: Քանի որ դասի կազմակերպումը բարդ գործընթաց է, դասին նախապատրաստվելը և մասնակցելը աշակերտից պահպանջում է մտավոր, ֆիզիկական և բարոյական մեծ ջանքերի ներդրում:Դասը որոշում է աշակերտի առօրյան,նրա հոգեբանական վիճակն ու տրամադրությունը:Դասի կազմակերպումը պետք է դիտել որպես պետական, մանկավարժական կարևորագույն միջոցառում:Միայն այս դեպքում կարող է ապահովել աճող սերնդի ճիշտ և նպատակասլաց զարգացումը: Դասը ուսուցման գործընթացի բովանդակային, կազմակերպման ժամանակային ավարտուն հատված է:Դասին ներկայացվում են հետևյալ հիմնական դիդակտիկական պահանջները.

- ✔ դաստիարակչական և դիդակտիկական նպատակների միասնությունը,
- ✔ դասի բովանդակության գիտականությունը և նպատակաուղղվածությունը, աճող սերնդի համակողմանի և ներդաշնակ զարգացումը,դասի հստակ պլանավորումը և նախապատրաստումը,
- ✔ դասի համար անհրաժեշտ բոլոր ուսումնաօժանդակ պայմանների առկայությունը,
- ✔ դասին բոլոր դիդակտիկական սկզբունքների առավել նպատակահարմար, համակողմանի և արդյունավետ կիրառումը,
- ✔ աշակերտների կողմից դասին հոգեբանորեն, բարյապես և ֆիզիկապես պատրաստ լինելը,

- ✔ ուսուցման խնդիրների պարզ գիտակցումը աշակերտների կողմից և այդ խնդիրների իրականացմանը նպատակաուղղված լինելը (ուսուցչի հետ համագործակցության պատրաստակամություն),
- ✔ ուսուցչի աշակերտների համագործակցության բարձր մակարդակը, հետադարձ կապի ապահովումը, ապա հին և նոր դասերի միջև, կապը սովորողի անձնական փորձի հետ,
- ✔ սովորողի գործունեության բոլոր ոլորտների դրական մոտիվացիան,ուսումնական մոտիվների ձևավորումը,
- ✔ դասին սովորողների գործնական աշխատանքի կարողությունների և հմտությունների ձևավորումը,նրանց ինքնուրույն ուսումնական աշխատանքի համար նախապատրաստելը,
- ✔ ուսուցման միջոցների (դիդակտիկական պարագաներ, տեխնիկական միջոցներ և այլն),
- ✔ արդյունավետ և լավագույն (օպտիմալ) կիրառումը,
- ✔ ուսուցման գործընթացի ճիշտ դիագնոստիկան և հետագա առաջընթացի ուղիների և մեթոդների գիտական կանխատեսումը և պլանավորումը,
- ✔ դասի ինքնավարությունը,ուսուցչի փորձի կազմակերպումը և ներդրումը:

2.Գրական ակնարկ

Դասերն ըստ դիդակտիկական ֆունկցիայի լինում են տարբեր տիպի: Դիդակտիկայում առանձնացվում են դասերի երկու խմբեր.

1.Մասնագիտացված դասեր,որոնք կատարում են հիմնականում մեկ դիդակտիկական ֆունկցիա,

նոր գիտելիքների հաղորդման դաս,

գիտելիքների, կարողությունների և հմտությունների կրկնության և ամրապնդման դաս,

գիտելիքների, կարողությունների, հմտությունների ստուգման և գնահատման դասեր,

ընդհանրացնող դասեր:

2.Խառը տիպի դասեր,որոնցում սովորաբար զուգակցվում են այս բոլոր ֆունկցիաները.միևնույն դասին իրականացվում է և հին դասի հարցում,և նոր դասի հաղորդում, կրկնություն, ամրապնդում, ընդհանրացում և այլն:

Դասի տիպը որոշելիս ուսուցիչը ելնում է նյութի յուրահատկություններից, աշակերտների տարիքային առանձնահատկություններից, ուսուցման գործընթացի տրամաբանությունը որոշող մյուս գործոններից: Յուրաքանչյուր տիպի դաս ունի յուրահատուկ կառուցվածք:Ուսուցիչը դասի կառուցվածքը որոշելիս ելնում

է իր կոնկրետ նպատակներից՝ ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում: Սակայն բոլոր տիպի դասերին բնորոշ են հետևյալ կառուցվածքային տարրերը.

դասի սկիզբ կամ կազմակերպական մաս,

դասին սովորողների ներգրավում և թեմայի ճանաչողական խնդրի առաջադրում,

դասի հիմնական մաս՝ հին նյութի հարցում, կրկնություն, նոր դասի հաղորդում և այլ (կամ բոլորը միասին խառը տիպի դասի ընթացքում),

դասի ավարտ, որը հատուկ մանկավարժական պահ է, և չի կարելի նույնացնել հարցերի սպառման կամ տնային աշխատանքների հանձնարարման հետ:

Դասապրոցեսում խաղը որպես ակտիվ ուսուցման կազմակերպման ձև ակտիվացնում է երեխաներին:Խաղի միջոցով կարելի է լուծել ուսումնական բոլոր խնդիրները՝ հատկապես կրտսեր դպրոցում: Հարկավոր է ոչ թե դասը բաժանել ուսումնական աշխատանքի ու խաղի, այլ պարզապես խաղը տարրալուծել ուսումնական գործընթացի մեջ և ուսումնական նպատակներն իրականացնել խաղի օգնությամբ ու խաղի միջոցով: Ուսուցման ընթացքում խաղի կիրառումը զարգացնում է երեխաների ուշադրությունը, օգնում է ուսուցչին ակտիվացնել անհամարձակ երեխային, որովհետև խաղալիս երեխան իրեն ազատ է զգում:Երեխաներին հնարավորություն է տրվում ազատ արտահայտելու իրենց մտքերն ու կարծիքները: Խաղային իրավիճակներում երեխան դառնում է առավել գործուն և ուշադիր: Խաղերը հաճախ տեղեկատվական բնույթ են կրում: Խաղի ընթացքում երեխան կարողանում է ազատ մտածել տվյալ հարցի շուրջ: Քննարկման փուլում նա լսում է ուրիշների կարծիքները և նույն հարցի վերաբերյալ տարբեր մեկնաբանություններ: Ինքն էլ հնարավորություն ունի համագործակցելու ընկերների հետ և սեփական որոշում կայացնելու: Արդյունքում երեխան ինքնավստահություն է ձեռք բերում և զարգացնում զննողականությունը : Շատ արդյունավետ է կիրառել <<Մտագրոհ >>, <<Ապագայի անիվ >> մեթոդները, օգտագործելով նաև Տ-ածև աղյուսակի, Վենի դիագրամի, Գաղափարների քարտեզագրման ու Խճանկարի մեթոդներն ու մեթոդական հնարները:

3.Փորձարարական հետազոտություն

3.1.Խմբի նկարագիրը՝

Դասը որպես ուսուցման կազմակերպման հիմնական ձևի, դասի արդյունավետության բարձրացման հոգեբանամանկավարժական ուղիները և պայմանները, խաղը որպես ուսուցման մեթոդի կիրառմամբ նախագծված հետազոտական աշխատանքը իրագործելու նպատակով որպես փորձարարական դասարան ընտրել եմ Վարդենիսի թիվ 4 միջնակարգ դպրոցի 3-րդ դասարանը՝

- Հետազոտվող դասարանում աշակերտներների թիվն էր 20 աշակերտ՝9 աղջիկ, 11 տղա:
- Աշակերտներն ունեին առաջադիմության ու զարգացման հիմնականում միջին մակարդակ:
- Հետազոտելի դասարանում ուսուցումն իրականացրել եմ ‹‹Մտագրոհ ››, ‹‹Ապագայի անիվ ›› մեթոդների օգնությամբ, օգտագործելով նաև T-ածև աղյուսակի, Վենի դիագրամի, Գաղափարների քարտեզագրման ու Խճանկարի մեթոդներն ու մեթոդական հնարները:

Հետազոտության շրջանակներում փորձարարական դասարանում ընտրվել են՝ Անգլերենի դասագրքի երկու թեմաներ: Գիտափորձի իրականացման համար կիրառման մեջ են դրվել իմ կողմից նախապես մշակված դասերի պլանները՝

- հետազոտության համար հիմք է ընդունվել « Հանրակրթության պետական չափորոշիչը,
- հետազոտվող դասարաններում մանկավարժական հետազոտության արդյունքները չափվել են իմ կողմից մշակված հարցաշար-քարտերի վերլուծության հիման վրա:

Հետազոտության ընթացքում հատուկ ուշադրության կենտրոնում եմ պահելու 3 աշակերտների, որոնք իմ կարծիքով ավելի կաշկանդված են և դժվարությամբ են մասնակցում դասապրոցեսին: Նպատակն է նաև փորձարարական դասերի արդյունքում ակտիվացնել այս աշակերտներին , որպեսզի դասերին ավելի ակտիվորեն մասնակցեն:

3.2.Փորձարարական դաս-1

Այսօրվա դասն էր ‹‹ F f -տառի ուսուցում ›› թեման (տե՛ս դասապլան-1 էջ՝ 13): Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով, բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները ՝ որոշակի սխալներով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները: Այնուհետև աշակերտներին հանձնարարվեց գունավոր թղթերի վրա նախ նկարել F տառը, ապա փորձել նկարել Fox (աղվես)-ին: Ապա օգտագործելով Մտագրոհ մեթոդը առաջադրվեց, որ յուրաքանչյուր աշակերտ արտասանի մեկական F-ով սկսվող բառեր, իսկ ուսուցիչը գունավոր մատիտներով այն գրում է գրատախտակին նկարված շրջանակների մեջ: ՈՒսուցիչը բարձրաձայն արտասանում է բառերը, իսկ աշակերտները կրկնում են սովորելով դրանց ճիշտ արտասանությունը: Այնուհետև օգտագործվում է Ապագայի անիվ մեթոդը , գրատախտակին շրջանակի մեջ գրել ‹‹frog ›› բառը, և նրանից դուրս եկող ճյուղերից շրջանակների մեջ գրել նրա տառերով սկսվող բառեր: Գրատախտակին ցուցադրել F f տառի գրությունը , հանձնարարել գրել տետրերում: Ողջ ընթացքում ուշադրություն դարձնել նախանշված աշակերտներին, տալ ցուցումներ: Այնուհետև հանձնարարել տնային աշխատանք:

3.2. Փորձարարական դաս-1

Այսօրվա դասն էր << Simple past >> թեման (տե՛ս դասապլան-1 էջ՝ 13): Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով, բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները՝ որոշակի սխալներով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները: ,,Ցածր,, առաջադիմություն ունեցող աշակերտներին հանձնարարվում է տեքստից դուրս գրել անկանոն բայերը: Երկու աշակերտ կատարում են առաջադրանքները գրատախտակին, մյուսները կատարում են տետրերում: Բացում են դասագրքերը, պատրաստվում են նոր դասին: Ներկայացնում են տնային աշխատանքները, պատասխանում հարցերին: Երկու աշակերտ կատարում են առաջադրանքները գրատախտակին, մյուսները կատարում են նշումներ տետրերում: Բարձր առաջադիմության տեր աշակերտները կատարում են աշխատանք դասագրքից, իսկ ցածր առաջադիմության տեր աշակերտները դասագրքի վերջից դուրս են բերում անկանոն բայերը, թարգմանում և արտասանում:

4. Վերլուծություն

Դասը բարդ ստեղծագործական աշխատանք է: Դասի գիտական կազմակերպումը պահանջում է ուսուցչից մանրակրկիտ նախապատրաստություն,որը ենթադրում է հետևյալ աշխատանքները: Դասը սովորողների կողմից նոր նյութի յուրացումն է, որին տրամադրվում է դասաժամի մեծ մասը: Դասի ընթացքում կարող են գործածվել այնպիսի եղանակներ, ինչպիսիք են խաղը, բացատրությունները, առանձին հարցերի շուրջ զրույցները, քննարկումները, ինքնուրույն աշխատանքները և այլն: Ուսուցիչը նախքան նյութի հաղորդումը պետք է ակտիվացնի սովորողների ուշադրությունը, մտավոր գործունեությունը, կազմակերպի ու համակարգի ստացվող գիտելիքները: Դասի հիմնական նպատակն աշակերտների պատրաստվածության գնահատելն ու շտկումներ կատարելն է: Մտագրոհ և Ապագայի անիվ և այլ մեթոդների համակցված կիրառումը, ակտիվ ու ջանասեր աշխատանքը տալիս են ցանկալի պտուղներ: Դասին ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին նաև իմ նախանշած երեք աշակերտները, ցուցաբերելով բարձր ակտիվություն:

Գրականության ցանկ

1. Բաբայան Գ. Աշխատանքային դաստիարակության կազմակերպումը արտադրական ուսուցման պրոցեսում, Երևան, 1987

2.Մանկավարժություն.մանկավարժականտեսություններ,համակարգեր,տեխնոլոգիաներ. դասագիրք / խմբ. S. A. Սմիրնովա. 2ր դ ի ր ատ. Մ. : Ակադեմիա,1999թ.

3. Դյաչենկո Վ. Կ. Նոր դիդակտիկա Մ. : Հանրային կրթություն, 2001թ.

4.ժողովածու Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի, Նոր ուսուցիչ նոր դպրոցի համար, Մանկավարժական կրթության բարեփոխման հեռանկարներ. Տեսություն և պրակտիկա: Գիտաժողով /2012թ. դեկտեմբերի 14/, I պրակ, Երևան, «Մանկավարժ», 2013 թ., էջ 434

Դասապլան 1.

Ուսուցիչ՝ Նարինե Ավագյան

Առարկա՝	անգլերեն	Ամսաթիվ	25.01.2022	Կիսամյակ	II	Դասարան	III
Թեմա՝	F f -տառի ուսուցում						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, մատիտներ, գունավոր թղթեր:						

Դասի նպատակը՝	• այբբենարանի ուսուցում, • բառապաշարի զարգացում, • երևակայության զարգացում, • նկարչական հմտությունների զարգացում, • սեփական նկարազարդ այբբենարանի ստեղծում:
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան՝ • գրել տառերը, • սովորել նոր բառեր, • կազմել երկխոսություններ:

Գործողությունները (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվողմեթոդ (ներ)
5րոպե-սկիզբ 10րոպե-ընթացք	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները Պատասխանել հարցերին Երեխաներին հանձնարարվում է	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցադրումներ	1. Ի՞նչ բառեր կարող եք թվարկել S տառով 2. Ո՞ր առարկայի կամ կենդանու միջոցով կարող եք պատկերել S տառը:	Հարցադրումների մեթոդ

15բոպե	նկարել **F** տառը իրենց պատկերացրած առարկաներով կամ կենդանիներով:	Գրատախտակին նկարում ենք առարկա կենդանի կամ այլ մի բան, որը սկսվում է **F** տառով: Հետևել կատարվող աշխատանքներին, կատարել շտկումներ Նոր թեմայի հաղորդում, Կատարել բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն		

12րոպե **3**րոպե-ավարտ	կատարել նշումներ,			Ստեղծել միջառարկայական կապ (կերպարվեստ) առարկայի հետ
Տնային աշխատանք	Դասը սովորել պատմել, տնային տետրերում գրել վարժություն 2-ը:			

Դասապլան **2**.

Ուսուցիչ՝ Նարինե Ավագյան

Առարկա՝	անգլերեն	Ամսաթիվ	**05.05.2022**	Կիսամյակ	**II**	Դասարան	V
Թեմա՝	Simple past						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, բառարան:						

Դասի նպատակը՝	• Իմանալ–անցյալ ժամանակի ժամանակաձևերի կազմությունը հայոց լեզվից, • Հասկանալ–ժամանակաձևի կազմությունը անգլերենում, • Իմանալ–անցյալ ժամանակաձևի հարցական և ժխտական ձևերի կազմությունը,
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան՝ • Տարբերակել–կանոնավոր և անկանոն բայերը, • Կազմել– անկանոն բայերով նախադասություններ , • Կազմել–նախադասություններ անցյալ ժամանակաձևով և այդ նույն նախադասությունները դարձնել հարցական և ժխտական:

Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվողմեթոդ (ներ)
5րոպե–սկիզբ	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները Պատասխանել հարցերին	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին	1.Ի՞նչ է ցույց տալիս ներկա ժամանակը հայերենում 2.Ինչպե՞ս է արտացոլվում այդ ժամանակաձևը հայերենում	
10րոպե–ընթացք	,,Ցածր,, առաջադիմություն ունեցող աշակերտներին հանձնարարվում է տեքստից դուրս գրել անկանոն բայերը: Երկու աշակերտ կատարում են	Տալ ուղղորդող հարցադրումներ Գրատախտակը բաժանել 2 մասի, գրել տարբեր նախադասություններ,առաջարկելով ընդգծել բայերը	3.Որո՞նք են անգլերենում ներկա ժամանակի օժանդակ բայերը 4.Ի՞նչ նման ժամանակաձև գիտեք ներկա	Հարցադրումների մեթոդ

15րոպե	առաջադրանքները գրատախտակին, մյուսները կատարում են տետրերում: Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները Պատասխանել հարցերին **2** աշակերտ կատարում են առաջադրանքները գրատախտակին, մյուսները կատարում են նշումներ տետրերում Բարձր առաջադիմության տեր աշակերտները կատարում են աշխատանք դասագրքից, իսկ ցածր առաջադիմության տեր աշակերտները	Հետևել կատարվող աշխատանքներին, կատարել շտկումներ Նոր թեմայի հաղորդում, Կատարել բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն	ժամանակաձևի հետ կապված 5.Ի՞նչ է հուշում ձեզ ներկա շարունակական ձևը 6.Ինչպե՞ս է կազմվում ներկա շարունակական ձևը	Մտագրոհ Ապագայի անիվ

12 բոպե 3 բոպե-ավարտ	դասագրքի վերջից դուրս կբերեն անկանոն բայեր, կթարգմանեն և կարտասանեն Լուռ լսել դասը , կատարել նշումներ, հնչեցնել անհասկանալի հարցեր, աշխատանք դասագրքի հետ:			Ստեղծել միջառարկայական կապ (կերպարվեստ) առարկայի հետ
Տնային աշխատանք	Տնային տետրերում գրել վարժություն 2-ը, էջ 34:			